

քաղցութիւնն յազեցընելու միակ ճամբայ՝ փողերանոցի բարձր պաշտօնը կարծելով, յայն կը ձգտէր, եւ այս վախճանաւ իւր չարանիւթ գաղտնածածուկ նենգութիւնը սահման ու չափ չէր գիտեր: Բայց ի՞նչ եղաւ քննութեան վախճանն. Տիւղեանք յաղթանակեցին եւ իրենց Աւհապետին կամօքը սամոյրներ հագան, որ թագաւորին հաճութիւնը վայելելու ամենամեծ նշաններէն էր:

Այսպէս անմլեաս անցաւ այս փոթորիկն, որ հարկաւ ափիբերան լուեցուցած պիտի ըլլար Տիւղեանց ուժածափ, շնչասպառ թշնամիքը: Բայց աւա՛ղ, չեղաւ այնպէս. թշնամեաց ռիակալ ատելութիւնը վերջին յուսահատական փորձ մըն ալ ըրաւ, եւ — ցաւով կ'ըսենք — այս անգամ կըրցան յաջողութիւն գտնել:

Տիւղեանց դէմ գրգռուող ամենամեծ թշնամիներուն բուն պարագլուխն էր Հալէտ Էֆ.: Ի սկզբան անդ Տիւղեանք նշմարեցին՝ որ նոր դարան մը կը լարուի իրենց կենաց դէմ, բայց քաջալերեալ նախընթաց փորձերուն շատ անգամ ապարդիւն մնալէն՝ ապահով էին թէ այս անգամն ալ պիտի կարենան իրենց դէմ եղած զրպարտութիւններն ի դերեւ հանել: Բայց խոհեմական զգուշութիւնը պէտք չէր ձեռքէ թող տրուիլ. մանաւանդ այսպիսի տագնապալից ժամանակի մը մէջ: Ստոյգ է, այնպիսի բարձր պաշտօններու մէջ այնչափ ատեն վայելող ընտանիք մը կրնար իւր վիճակին համեմատ փառաւորութիւններ ցուցընել, բայց գոնէ նոյն միջոցին, որ իրենց դէմ